ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1938 • ԵՐԵՎԱՆ

31 JAN 2018

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հաստատված է ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ-ի կողմից 1937 թ. ապրիլի 29-ին)

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1938 • ՅԵՐԵՎԱՆ

# ИНСТРУКЦИЯ

## О ЧЛЕНСКИХ ВЗНОСАХ ЧЛЕНОВ И КАНДИДАТОВ ПАРТИИ

Армпартиздат, Ереван, 1938

1-3684ф

## I. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցության կանոնադրության 62-րդ պարագրաֆին համապատասխան՝ կուսակցության անդամների և թեկնածուների համար սահմանվում են հետևյալ չափերի ամսական անդամավճարներ.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մինչև 100 ռ. աշխ. | վարձ. | ստացողն. | վճարում են | — | ռ. | 20 | կ. |
| 101 ռ. » 150 ռ. | » | » | » | » | — | » 60 | » |
| 151 » » 200 » | » | » | » | » | 1 | » — | » |
| 201 » » 250 » | » | » | » | » | 1 | » 50 | » |
| 251 » » 300 » | » | » | » | » | 2 | » — | » |
| 300 ռ.-ից բարձր մինչև 500 ռ. | | | » | » | 2% | աշխատավարձից | |
| 500 » » » | | | » | » | 3% | | |

2. Անդամավճարներ ընդունելիս պետք է հաշվի առնվի կոմունիստի ինչպես հիմնական աշխատավարձը, այնպես էլ նրա ամբողջ լրացուցիչ վաստակը (աշխատանք համատեղության կարգով, արտաժամյա աշխատանք, դրական հոնորար, դասախոսության, մանկավարժական և այլ աշխատանքներ, աշխատավարձի հավելումներ յերկարամյա աշխատանքի համար, Միության հեռավոր վայրերում աշխատող կոմունիստների աշխատավարձի հավելում):

Կուսակցության անդամների և թեկնածուների վաստակ չպետք է համարվեն կոմունիստների ստա-

ցած պարգևատրումները, միանվագ նվերները, նպաստները և պետական փոխառությունների պարտատոմսերի շահումները:

Բացի այս հրահանգով սահմանված անդամավճարներից, կուսակցության անդամների և թեկնածուների վաստակներից կուսակցական դրամարկղի համար ուրիշ վոչ մի հանուրդ չպետք է կատարվի:

3. Գիտական աշխատող, գրող, ճարտարապետ, գյուտարար և գեղարվեստի աշխատող (նկարիչ, քանդակագործ, արտիստ, կինոաշխատող) կոմունիստներն անդամավճարներ տալիս են ընդհանուր կարգով, այսինքն՝ համաձայն այս հրահանգի 1-ին և 2-րդ կետերի:

Կոլտնտեսական կոմունիստները, վորոնք աշխորերի համար աշխատավարձ ստանում են դրամով և նատուրայով, ամսական անդամավճար տալիս են 50 կոպեկի չափով:

Կոլտնտեսական կոմունիստները, վորոնք բացի աշխորերի վարձատրությունից ստանում են նաև աշխատավարձ (կոլտնտեսությունների նախագահները, հաշվապահ-հաշվետարները, գյուղատնտեսները, զոոտեխնիկները, տրակտորիստները, կոմբայնավարները, արտադնաց աշխատանքով զբաղվողները և այլն), 50 կոպեկին լրացուցիչ անդամավճարներ են տալիս դրամական աշխատավարձից, համաձայն այս հրահանգի 1-ին և 2-րդ կետերի:

Կոլտնտեսական, արդյունաբերական արտելների անդամ կոմունիստները, վորոնք բացի աշխորերի համար ստացած վարձատրությունից ստանում են նաև դրամական վարձատրություն մշակած և հանձնած արտադրանքի համար, 50 կոպեկին լրացուցիչ անդամավճար են տալիս միջին ամսական վաստակից, համաձայն այս հրահանգի 1-ին և 2-րդ կետերի:

Տնայնա-արհեստագործական արտելների անդամ կոմունիստները, վորոնք աշխատավարձ ստանում են վոչ թե նատուրայով, այլ միայն դրամով, անդամավճարներ տալիս են փաստական վաստակից ընդհանուր կարգով, այսինքն՝ համաձայն այս հրահանգի 1-ին և 2-րդ կետերի:

Կարմիր-բանակայիններն ամսական տալիս են 10 կոպեկ անդամավճար, իսկ ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարները՝ 20 կոպեկ:

Ուսանողները, թոշակառուները, սոցապից կամ կոոպերատիվ ապահովագրումից նպաստ ստացող ժամանակավոր անաշխատունակները անդամավճարներ տալիս են ընդհանուր հիմունքներով, համաձայն իրենց ստացած թոշակի, կենսաթոշակի, նպաստի և այլ կողմնակի յեկամուտների (տես այս հրահանգի 1-ին կետը):

Տնային տնտեսուհիներն ամսական տալիս են 20 կոպեկ անդամավճար:

4. Կուսակցության թեկնածու ընդունվելիս մուտքի վճար, կուսակցության կանոնադրության 63-րդ պարագրաֆին համապատասխան, գանձվում է ստացած աշխատավարձի 2%-ի չափով:

Այն կոլտնտեսականները, վորոնք բացի աշխորերի համար ստացած վարձատրությունից ուրիշ վոչ մի աշխատավարձ չեն ստանում, Համ Կ(բ)Կ անդամու-

թյան թեկնածու ընդունվելիս տալիս են 1 ռուբլի մուտքի վճար:

Կարմիր-բանակայինները և ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարները Համկ(բ)կ անդամության թեկնածու ընդունվելիս տալիս են 50 կոպեկ մուտքի վճար:

Տնային տնտեսուհիները Համկ(բ)կ անդամության թեկնածու ընդունվելիս տալիս են 50 կոպեկ մուտքի վճար:

Մուտքի վճարներն ընդունում են անձամբ Համ. կ(բ)կ շրջկոմի, քաղկոմի քարտուղարը կամ քաղբաժնի պետը, վորը կուսակցության մեջ ընդունվածին հանձնում է կուսակցական վաստաթղթերը:

## II. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

5. Կուսակցության յուրաքանչյուր անդամ և թեկնածու անդամավճարներն անձամբ մուծում է կուսակցական կոմիտե կամ այն սկզբնական կուսկազմակերպության (թեկնածուական խմբակի, կուսակցական-կոմյերիտական խմբակի) կուսկազմակերպչին, վորտեղը ինքը հաշվառման մեջ է գտնվում, և անդամավճարներն ընդունում է կուսկոմիտեյի քարտուղարը (կուսկազմակերպիչը) անձամբ:

Կուսակցության այն անդամներն ու թեկնածուները, վորոնք կուսկազմակերպությունից ժամանակավորապես մեկնել են կարճատև դասընթացներ, պաշտոնեական գործուղման և այլն, անդամավճար տալիս են այն սկզբնական կուսկազմակերպությանը, վորտեղ իրենք ժամանակավոր հաշվառման մեջ են գտնվում:

Կուսկոմիտեների քարտուղարները և կուսկազմակերպիչներն իրավունք չունեն անդամավճարներ ընդունելու կազմակերպության նորեկ կոմունիստներից մինչև նրանց մշտական կամ ժամանակավոր հաշվառման ընդունվելը Համկ(բ)կ շրջկոմում:

Սկզբնական խոշոր կուսկազմակերպություններում, վորտեղ կոմունիստների թիվը 100-ից ավելի է, անդամավճարներ ընդունել կարող է թույլատրվել ցեխային, տեղամասային, ֆակուլտետային և այլ կուսակցական կազմակերպությունների կուսկազմակերպիչներին, ամեն մի առանձին դեպքում կուսակցության շրջկոմի, քաղկոմի հատուկ վորոշմամբ:

Միայնակ կոմունիստներն անդամավճարները տալիս են անմիջականորեն կուսակցության շրջանային, քաղաքային կոմիտեին: Անդամավճարների ընդունումն այդ դեպքերում կատարում են կուսակցության շրջկոմի, քաղկոմի աշխատողներն ինչպես կոմունիստի աշխատանքի վայրում, նույնպես և կուսակցության շրջկոմում, քաղկոմում:

6. Կուսկոմիտեյի (ցեխկուսկոմիտեյի) քարտուղարը, սկզբնական կուսկազմակերպության (թեկնածուական խմբակի, կուսակցական-կոմյերիտական խմբակի) կուսկազմակերպիչն անդամավճարներ ընդունելիս կուսակցության անդամների կամ թեկնածուների կուստոմսում կամ թեկնածուական քարտում պարտավոր է դնել շտամպ և իր ստորագրությունն անդամավճարների մուծման մասին, ինչպես և Համկ(բ)կ յուրաքանչյուր անդամից և թեկնածուից ստացած

անդամավճարները գրանցել անդամավճարների ընդունման ցուցակում (ձև № 1)։

Անդամավճարների մուծումը նշելու շտամպի ձևը սահմանվում է կուսակցության շրջկոմի, քաղկոմի կողմից, և այդ շտամպը պետք է ունենա սկզբնական կուսակազմակերպության համարը, որը հատկացված է նրան համաձայն կուսակցության անդամների և թեկնածուների հաշվառման վերաբերյալ հրահանգի։

7. Անդամավճարների ընդունման ցուցակում, հաշվետու ամիսն սկսվելուց առաջ, գրվում են (այբբենական կարգով) տվյալ կուսակազմակերպությունում հաշվառման մեջ գտնվող՝ կուսակցության բոլոր անդամներն ու թեկնածուները, նշելով վերջին ամիսը, որի համար յուրաքանչյուր կոմունիստ անդամավճար է մուծել։ Հաջորդ սյունակները լրացվում են անդամավճարներն ընդունելու ժամանակ։

Կուսակցության այն անդամների և թեկնածուների վերաբերյալ, որոնք որևէ պատճառով չեն մուծել հաշվետու ամսվա անդամավճարը, կուսկոմիտեի քարտուղարի (կուսկազմակերպչի) կողմից արվում է համապատասխան նշում՝ ցույց տալով, թե որ ամիսների (բացի հաշվետու ամսից) և ինչ գումարի պարտք է մնացել։

## III. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՄԸ, ՀԱՆՁՆՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8. Կուսակցական կոմիտեների (ցեխկուսկոմիտեների) քարտուղարները, սկզբնական կուսակազմակերպությունների (թեկնածուական և կուսակցական-կոմ-



յերիտական խմբակների) կուսկազմակերպիչները գանձված անդամավճարները պարտավոր են յուրաքանչյուր դեկադում մեկ անգամից վոչ պակաս հանձնել խնայողական դրամարկղի մերձակա բաժանմունքը, Պետբանկ՝ մարզկոմի, յերկրկոմի, ազգային կոմկուսի ԿԿ-ի ընթացիկ հաշվին փոխանցելու մասին հայտարարություն էլ հետը (ձև № 2)։

Կուսկոմիտեների քարտուղարները և գյուղական սկզբնական կուսկազմակերպությունների (թեկնածուական խմբակների) կուսկազմակերպիչները հավաքած անդամավճարներն ամսական մեկ անգամ հանձնում են խնայողական դրամարկղի մերձակա բաժանմունքը։

Անդամավճարների ընդունման ցուցակները և դրամները խնայդրամարկղ մուծելու մասին փաստաթղթերը մնում են և պահվում սկզբնական կուսկազմակերպության կուսկոմիտեում կամ կուսակցության շրջկոմում։

Անդամավճարների ընդունման ցուցակները ցեխային կուսկազմակերպիչները պարտավոր են հանձնել կուսկոմիտեի քարտուղարին վոչ ուշ քան հաջորդ ամսվա 5-ը՝ հավաքված դրամները խնայդրամարկղ հանձնելու փաստաթղթերի հետ միասին։

Յուրաքանչյուր հաշվետու ամսվա վերջին կուսկոմիտեների քարտուղարները, սկզբնական կուսկազմակերպությունների կուսկազմակերպիչները կազմում են ընդհանուր հաշվետվություն (ձև № 3) անցած հաշվետու ամսվա անդամավճարների գանձման մասին և ներկայացնում են կուսակցության շրջկոմին,

քաղկոմին վոչ ուշ քան հաշվետու ամսին հաջորդող ամսի 10-ը:

Ծանոթագրություն. ա) Ծայրագույն հյուսիսի և այլ շրջաններում, վորտեղ կապի վատ լինելու պատճառով դժվար է իրագործել § 8-ի մեջ շարադրված պահանջը, սկզբնական կուսակազմակերպություններում հավաքված անդամավճարների հանձնման կարգն ու ժամկետները վորոշում են մարզկոմները, յերկրկոմները և ազգային կոմկուսների կենտկոմները:

բ) Ցեխային, ֆակուլտետային, տեղամասային և այլ կուսակազմակերպությունների կուսակազմակերպիչները գանձած անդամավճարները ղեկադում մեկ անդամից վոչ պակաս հանձնում են կուսկոմի քարտուղարին կամ կուսակցական կոմիտեյի վորոշմամբ անմիջականորեն խնայդրամարկղը:

9. Անդամավճարների մուծման մասին սկզբնական կուսակազմակերպությունների ամսական հաշվետվությունների հիման վրա կուսակցության շրջկոմները, քաղկոմները կազմում են ընդհանուր հաշվետվություն անցած ամսվա անդամավճարների գանձման մասին շրջանային, քաղաքային կուսակազմակերպությունների համար ամբողջությամբ առած (ձև № 3) և վոչ ուշ քան հաշվետու ամսին հաջորդող ամսի 15-ը ներկայացնում են մարզկոմ, յերկրկոմ, ազգային կոմկուսի կենտկոմ: Ընդամին, բացի սկզբնական կուսակազմակերպություններից ստացված տեղեկություններից, ցույց է տրվում խնայդրամարկղից Պետբանկի շրջանային, քաղաքային բաժանմունքը ընթացիկ հաշվով մուծած անդամավճարների գումարը:

Կուսակցության շրջկոմներում, քաղկոմներում յուրաքանչյուր սկզբնական կուսկազմակերպության համար առանձին պահվում են անդամավճարների մուծման հաշվառման քարտեր (ձև № 4), վորոնք կանոնավոր կերպով, յուրաքանչյուր ամիսն անցնելուց հետո, լրացվում են սկզբնական կուսկազմակերպություններից անդամավճարների մասին ստացված հաշվետվությունների հիման վրա:

## IV. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

10. Մարզկոմները, յերկրկոմները և ազգային կոմկուսների կենտկոմները կուսակցության շրջկոմներից և քաղկոմներից ստացվող հաշվետվությունների հիման վրա իրենց մոտ կուսանդամավճարների ստացման հաշվառում են տանում (ձև № 4) յուրաքանչյուր շրջանային, քաղաքային կուսկազմակերպության համար առանձին, շրջկոմների, քաղկոմների հաշվետվություններն ստուգում են կուսակցական բյուջեյի ընթացիկ հաշվին մուծված անդամավճարների գումարի հետ, ընդհանուր հաշվետվություն են կազմում ամբողջ մարզային, յերկրային կուսկազմակերպության համար և վոչ ուշ քան հաշվետու ամսին հաջորդող ամսի 20-ը ներկայացնում են այն Համկ(բ)Կ կենտկոմին:

Մարզկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսների կենտկոմները պարտավոր են լսել անդամավճարների ընդունման գործի ղեկավարման վերաբերյալ

կուսակցության առանձին շրջկոմների, քաղկոմների տարած աշխատանքների հաշվետվությունները, և վեց ամիսը մեկ անգամից վոչ պակաս քննության առնել ֆինանսական բաժնի վարիչի հաշվետվությունը մարզում, յերկրամասում, հանրապետության մեջ անդամավճարների գանձման դրության մասին:

11· Կուսակցության շրջկոմները, քաղկոմները պարտավոր են հետևել կոմունիստների՝ անդամավճարներն իր ժամանակին մուծելուն, սկզբնական կուսկազմակերպությունների անդամավճարներից գոյացած գումարները ժամանակին խնայդրամարկղ հանձնելուն և ոգնել սկզբնական կուսկազմակերպություններին անդամավճարների ընդունման գործը կանոնավորապես կազմակերպելու:

Անդամավճարների գանձման հանրագումարը յերեք ամիսը մեկ անգամից վոչ պակաս պետք է քննվի և հաստատվի սկզբնական կուսկազմակերպություններում կուսակցական կոմիտեների կողմից, այն կուսկազմակերպություններում (թեկնածուական խմբակներում), վորտեղ չկան կուսկոմիտեներ,—կուսակցական ընդհանուր ժողովներում, իսկ շրջանային, քաղաքային կուսկազմակերպություններում՝ կուսակցության շրջկոմների, քաղկոմների կողմից:

12· Շրջանային, քաղաքային, մարզային, յերկրային, ազգային կոմկուսների վերստուգիչ հանձնաժողովները պարտավոր են յեռամսյակում մեկ անգամից վոչ պակաս ստուգել կուսակցության անդամներից և թեկնածուներից անդամավճարներ գանձելու ճշտությունը, հավաքած անդամավճարները կուսակցական դրամարկղ ժամանակին փոխանցելը և անդամավճարների գանձման մասին ճիշտ հաշվետվություն ներկայացնելը:



Վերստուգիչ հանձնաժողովների արձանագրությունները պարտադիր կարգով պետք է քննարկվեն շրջկոմների, քաղկոմների, մարզկոմների, յերկրկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների կողմից և նրանց քննարկումից հետո Համկ(բ)Կ համապատասխան կոմիտեի վորոշման հետ միասին պետք է ուղարկվեն կուսակցության վերադաս կոմիտեին:

Մարզային, յերկրային և հանրապետական կուսկազմակերպությունների վերստուգիչ հանձնաժողովների արձանագրությունները պետք է ներկայացվեն Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովին:

# ՀԱՎԵԼՎԱԾ

Ձև № 1

# ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Գանձված ..... ամիս 193 թ.

..... ԿՈՒՍ. ԱՆԴԱՄՆԵՐԻՑ ՑԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՑ

(Կազմակերպության անունը)

| № № ըստ կարգի | ԱԶԳԱՆՈՒՆ ՑԵՎ ԻՆԻՑԻԱԼՆԵՐ | Դուրսգրողների № № | Վերջի վար ամսվա համար է մուծված անդամավճարը | Վար ամիսների համար է մուծված անդամավճարը | Հաշվետվության մեջ ամսվա ընթացքում գումարը | Մուծման գումարը | Անդամավճարների պարտք հաշվետու ամսվա վերջի դրությամբ | | | Ստորագրություն անդամավճարների գանձման կամ նշումներ հիվանդության, գործուղման, կուսկազմակերպությունից դուրս գալու մասին յեվ այլն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վար ամիսների | գումարը | | |
| | | | | | | | | Ռ. | Կ. | |
| 1 | Իվանով Ի. Ի. . . | 0000000 | Հունիս | Հուլիս | 345— | 6.90 | — | — | — | Անձն. ստորագրութ. |
| 2 | Պետրով Պ. Պ. . . | 0000000 | Մայիս | Հունիս | 700— | 21·00 | — | — | — | Անձն. ստորագրութ. |
| | | | | Հուլիս | 760— | 22·80 | — | — | — | |
| 3 | Սիդորով Ս. Ս. . . | 0000000 | Մայիս | Հունիս | 250— | 2.— | Հուլիս | 2 | — | Անձն. ստորագրութ. |
| 4 | Տիմոֆեյեվ Պ. Ի. | 0000000 | Հունիս | — | — | — | Հուլիս | 5 | — | Գործուղմանմիջ է |
| 5 | Ֆիլիպպով Ա. Բ. | 0000000 | Հունիս | — | — | — | — | — | — | Հաշվառում. հանված է |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . . . | — | — | — | 2055 | 52·70 | — | 7 | — | |

Կուսկոմիտեյի քարտուղար
կամ կուսկազմակերպիչ՝ (ստորագրություն)

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

.....-ի № ..... ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻՆ
(Շրջանի, քաղաքի անունը)

.....քարտուղար (կուսակազմակերպիչ)
(կուսակազմակերպության անունը)

..... -ից
(ազգանուն, անուն, հայրանուն)

Խնդրում եմ ընդունել Պետական փոխանցելու համար

.....-ի հատուկ ընթացիկ
(ազգ. կոմկուսի ԿԿ-ի, յերկրկոմի, մարզկոմի անունը)

հաշվին 193..... թվի .....ամսին հավաքված անդամավճարները

գումարով ..... ռ. ..... կոպ.
(գրել բառերով)

«.....» ..... ամիս 193..... թ (ստորագրություն)

## ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ՆՇՈՒՄԸ

Ստացված է № ..... խնայդրամարկղի կողմից

գումարով՝ ..... ռ. ..... կոպ. .....

.....
(գրել բառերով)

ՀՍԿԻՉ՝ (ստորագրություն)

ԳԱՆՁԱՊԱՀ՝ (ստորագրություն)

Խնայդրամարկղի շտամպը

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Սույն հայտարարությունը խնայդրամարկղի կողմից փող ստանալու վերաբերյալ արած նշումով կցվում է համապատասխան ամսվա ձև № 1 ցուցակին։



# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

..... ՄԱՐԶԻ, ՅԵՐԿՐԱՄԱՍԻ, ՀԱՆՐԱՊԵՏ
(կուսակազմակերպության անունը)

193..... թ. ..... ԱՄՍԻՆ ՍՏԱՑՎԱԾ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հաշվետու ամսվա սկզբին կազմակերպության մեջ կային անդամներ և թեկնածուներ .....
2. Հաշվետու ամսում անդամավճարներ մուծող անդամների և թեկնածուների թիվը .....
3. Գանձված անդամավճարների ընդհանուր գումարը .....
4. Հանձնված է խնայդրամարկղին .....
5. Պետական ընթացիկ հաշվին մուծված անդամավճարների գումարը .....
6. Հաշվետու ամսվա վերջին կազմակերպության մեջ անդամներ և թեկնածուներ կան .....
7. Նրանցից անդամավճար չեն մուծել
   ա) մեկ ամսվա .....
   բ) յերկու ամսվա .....
   գ) յերեք և ավելի ամիսների .....
8. Պարտք մնացած անդամավճարների գումարը .....

(կնիքի տեղը) «.....» ..... 193 թ.

ԲԱՐՏՈՒՂԱՐ՝ ..... (ստորագրություն)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Ընդհանուր հաշվետվությունը ներկայացվում է՝

1. Սկզբնական կուսակազմակերպությունների կուսկոմիտեների կողմից շրջկոմին, քաղկոմին հաշվետու ամսվա հաջորդ ամսի 10-ին։
2. Շրջկոմների, քաղկոմների կողմից ոկրուգային կոմիտեներին, մարզկոմներին, յերկրկոմներին և ազգային կոմկուսների կենտկոմներին հաշվետու ամսվա հաջորդ ամսի 15-ին։
3. Մարզկոմների, յերկրկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների կողմից Համկ(բ)կ-ի Կենտկոմին հաշվետու ամսվա հաջորդ ամսվա 20-ին։

Ձև № 4

# ԱՆՀԱՍԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԻԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏԵՐ

(Կուսակցությունների ղեկավարների մեկ ամսում)

.....193 թ.

| ԱՄԻՍՆԵՐ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվառեցիչ խումբ ստացած միջոցառումներ | Ընդունված անդամներ մեկ ամսում. | | | | | | Սոցիալական գործունեություն | | | |
| | | | Ընդունված անդամներ | | | | Ուղարկված նյութեր կուսակցության կենտրոնի | 1 ամսում | 2 ամսում | 3 ամսում իր միջոցներով | Պատվիրված գրաբան |
| | | | տղամարդիկ | կանայք | երիտասարդներ | պատանիներ | | | | | |
| | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Հաշվային քարտերը տարվում են.

1. կուսակցությունների յուրաքանչյուր ցեղային կազմակերպության համար իր ընդհանուր քարտերի մեջ,
2. շրջանների, քաղաքների յուրաքանչյուր սեղանային կուսակցական կազմակերպության համար իր ընդհանուր քարտերի մեջ,
3. ինքնագնային խմբերում, մարզականներում, երիտասարդներում իր ազգային կոմունաների պետությունների յուրաքանչյուր քաղաքի, շրջանի համար իր ընդհանուր քարտերի կազմակերպության համար.

Թարգմ. Ա. Ղարագյուլյան
Խմբ. Ս. Բաղդասարյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտր. սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր Կ—3253, հրատ. № 531
Պատվեր № 240, Տիրաժ 1000
Հանձնված է արտադրության 25/XII 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 8/I 1938 թ.
Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալավերդյան № 71

40

ՀՀ Ազգային գրադարան
NL0928091

26 ЯНВ. 1938

21

1
3684

# ИНСТРУКЦИЯ
# О ЧЛЕНСКИХ ВЗНОСАХ
# ЧЛЕНОВ И КАНДИДАТОВ ПАРТИИ

Армпартиздат, Ереван, 1938